ֆրանկ է կազմել, իսկ սահա 1995-ին հասավ 198 միլիարդի: Նույն ժամանակաշրջանում արտահանված արտադրանքների ընդհանուր գումարը 7.30 մլրդ ֆրանկից աճեց մինչեւ 179 միլիարդի, իսկ ներկրման բնագավառում 2.9 միլիարդից մինչեւ 106 միլիարդ: Վերջին երկու տասնամյակում առեւտրային ավելցուկը տասնապատկվել է (4.2 մլրդ–42 մլրդ): Այս տպավորիչ տնտեսական աճի համար Էմիրություններն անկասկած պարտական են գլխավորապես հում նավթի գաղափարներին, որն առաջին անգամ արդյունահանվեց եւ արտահանվեց 1960-ականներին: Այսուհանդերձ, գիտակցելով այդ հարստության անցողիկ բնույթը, ԱՄԷ-ն անհիմնորեն ձեռնամուխ եղավ արդյունաբերությունը բազմաբնագավառ դարձնելու գործին: Սկսած 1980-ից ոչ նավթային էկոնոմիկան բազմապատկվել է. շնորհիվ ազատ առեւտրի եւ նավթի հետ կապ չունեցող բազմաբնույթ արտադրությունների: Տեղի է ունեցել նաեւ զբոսաշրջության շոշափելի վերընթաց: Այսօրեր մեծ ներդրումներ են արվում զբոսաշրջության հիմքը կազմող հնարակառուցվածքի մեջ: Օրավուր աճում է Դուբայ այցելող մարդկանց թիվը: Հոյակապ լողափներից եւ շուրջամյա արեւոտ եղանակից զատ, ԱՄԷ-ում գտնող ազատ ու անկաշկանդ մթնոլորտը հազարավոր այցելուների հաղորդակից է դարձնում իր հիանալի խոհանոցին, համեղ գինիներին, բազմաթիվ առեւտրային կենտրոններին եւ կապույտ օրագրային զվարճանքներին, ու տնամամառային միջոցառումներին սկսած «Դուբայ Էքս Շոու»-ից եւ վերջացրած «Դուբայ Շոփինգ Ֆեստիվալ»-ով: Տարեկան էմիրություններ է այցելում 2.3 մլն զբոսաշրջիկ:

ԱՄԷ-ում նույն չափով ծաղկում է նաեւ առեւտուրը: շնորհիվ Դուբայի Ջեբել Ալի ազատ գոտու, որ կենտրոնացած են շուրջ մեկ հազար ընկերություններ, որոնք հանձինս Էմիրությունների տանում են Մերձավոր Արեւելքի եւ հնդկական հնբաբերի միջին տեսությունը 74 տարի է:

Երբեմ չեն դադարել այդ տարիներին ներդրումները երկրի ենթակառուցվածքի մեջ: Այսօր Էմիրությունների անասդաստները ծածկված են 3 հազար կմ ավտոմոտիներով: Երկիրն ունի 15 նավահանգիստ եւ 6 արդիական օդակայան: Հեռախոսային կապի հասմակարգն օժտված է 600 հազար կայուն եւ 100 հազար շարժական հեռախոսային գծերով:

Մի խոսքով ակնառու են ԱՄԷ-ի բազմաթիվ ու բազմաբնույթ

խարհի առեւտրի արտաբեգիական հարթակ: ԱՄԷ-ից արտահանվող գլխավոր արտադրանքը ալյումինն է եւ դրա երեւույթին, այդ մետաղի արտադրությունը 1997-ին կավելանա 52 տոկոսով ու կհասնի 372 հազար տոննայի:

Նշանակալից տեղաշարժեր են կատարվում նաեւ սոցիալական ոլորտում: Օրինակ եթե 1972-ին երկրում կար ընդամենը 147 դպրոց, որ դասավանդվում էին 2309 ուսուցիչներ, արդա 1994-ին դպրոցների թիվը հասավ 885-ի, իսկ ուսուցիչներինը 32 հազարի: 1972-ին ամբողջ երկիրն ուներ լոկ 264 բժիշկ, իսկ սահա 1994-ին ազգաբնակչությանը 3728 բժիշկ էր սպասարկում: Նշենք նաեւ, որ այս երկրում կան

մեծ կենտրոններ: Աշտարակը կառուցվելու է «Բոլիֆ Մաշեյնգ» կոչված սակարանային տուկայի վայրում, որը 1992-ին մեծաղեռ ավերվել էր իոլանդական բանակի ականահարման հետեւանքով: Աղակու տարբեր տեսակներով կառուցվելիք աշտարակը ունենալու է 140 հազար քառակուսի մետր տարածություն եւ իր բարձրությամբ գերազանցելու է Եվրոպայում ցարդ ամենաբարձր շինությանը Քոմերցբանկին Ֆրանկֆուրտում: Շենքը դարձակելու է 3250 քառ մետր տարածությամբ ժողովարահներ եւ 8000 դաշտոնյաների համար բավարար գրասենյակային տարածք: 310 մետր բարձրության վրա հատակությանը տրամադրված բաժինը քաղաքային հեռամյնադաստերի անզուգական տեսարաններ է դարձնելու այցելուներին: Մանրակրկիտ ուսումնասիրություններ ցույց

տվել, որ աշտարակի շինությունը չի խանգարելու շրջակա հասատությունների: ասվեր չի գցելու ուշագրավ կառույցների (ինչպես, օրինակ, Սուրբ Պողոսի տաճարը) վրա: Սակայն հաշվի առնելով, որ երկնաքերը ցարդ Լոնդոնի ամենաբարձր Ազգային Ռեսուրսիսը դրամատան աշտարակի կրկնաստիկ բարձրությունն է ունենալու, նախատեսվում է հանրաքվեի միջոցով իմանալ ժողովրդի կարծիքը: Այդ առնչությամբ էլ շինարարական աշխատանքները հավանաբար սկսվեն մեկուկես տարի հետո, մանավանդ որ Թրաֆալգար Հաուս ընկերությունը պետք է արտոնություն ստանա նաեւ Անգլիայի Ազգային արժեքների ժառանգությանը հսկող կազմակերպություններից, որը պատասխանատու է երկրի ճարտարապետական եւ պատմական կառույցների պահպանման համար:

Հ. Օ.

ԱԼԳԻՐ

Եվրոպայի ամենաբարձր երկնաքերը՝ Լոնդոնում

«Միլենիում թաուեր» (հազարամյակի աշտարակ): Այսպես է կոչվելու Լոնդոնի կենտրոնական մասում Թրաֆալգար Հաուս ընկերության ծրագրած երկնաքերը, որի կառուցումը նախատեսված է ավարտել 2001 թ. ի նշանավորումն նոր դարասկզբի: 92 հարկանի, 390 մետր բարձրությամբ շինությունը պետք է արժենա շուրջ 620 միլիոն դոլար:

«Երկնաքերի կառուցումը արդարացի հանդեպ իմնավստահության հաստատումն է: Մեծ խանդավառություն է առաջացել այն վերածելու գեղագանցության հրաշալի մի հաստատության: Հատկապես հետաքրքրական է այն Լոնդոնում կառուցելու հնարավորությունը», նշում է ծրագիրը գլխավորող ճարտարապետ սր Նորմն Ֆոսթերը: Ակնարկելով Լոնդոնի կենտրոնական շրջանում գոյություն ունեցող սակավաթիվ բարձրահարկ շենքերը, ի հակադրություն Նյու Յորքի

կամ Հոնկոնգի նման մետրոպոլիսների: Աշտարակը կառուցվելու է «Բոլիֆ Մաշեյնգ» կոչված սակարանային տուկայի վայրում, որը 1992-ին մեծաղեռ ավերվել էր իոլանդական բանակի ականահարման հետեւանքով: Աղակու տարբեր տեսակներով կառուցվելիք աշտարակը ունենալու է 140 հազար քառակուսի մետր տարածություն եւ իր բարձրությամբ գերազանցելու է Եվրոպայում ցարդ ամենաբարձր շինությանը Քոմերցբանկին Ֆրանկֆուրտում: Շենքը դարձակելու է 3250 քառ մետր տարածությամբ ժողովարահներ եւ 8000 դաշտոնյաների համար բավարար գրասենյակային տարածք: 310 մետր բարձրության վրա հատակությանը տրամադրված բաժինը քաղաքային հեռամյնադաստերի անզուգական տեսարաններ է դարձնելու այցելուներին: Մանրակրկիտ ուսումնասիրություններ ցույց

տվել, որ աշտարակի շինությունը չի խանգարելու շրջակա հասատությունների: ասվեր չի գցելու ուշագրավ կառույցների (ինչպես, օրինակ, Սուրբ Պողոսի տաճարը) վրա: Սակայն հաշվի առնելով, որ երկնաքերը ցարդ Լոնդոնի ամենաբարձր Ազգային Ռեսուրսիսը դրամատան աշտարակի կրկնաստիկ բարձրությունն է ունենալու, նախատեսվում է հանրաքվեի միջոցով իմանալ ժողովրդի կարծիքը: Այդ առնչությամբ էլ շինարարական աշխատանքները հավանաբար սկսվեն մեկուկես տարի հետո, մանավանդ որ Թրաֆալգար Հաուս ընկերությունը պետք է արտոնություն ստանա նաեւ Անգլիայի Ազգային արժեքների ժառանգությանը հսկող կազմակերպություններից, որը պատասխանատու է երկրի ճարտարապետական եւ պատմական կառույցների պահպանման համար:

Հ. Օ.

ՇՐՋԱՆ

«Իրանը եւ Ռուսաստանը խաղաղության հիմնական պատվարներն են տարածաշրջանում»

ԹԵՀՐԱՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԼՏ: Թեհրանի ռադիոն հաղորդել է, թե Իրանում գտնվող Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը երկուշաբթի օրը ասել է, որ «Իրանը եւ Ռուսաստանը տարածաշրջանում խաղաղության առաջնորդման երկու հիմնական պատվարներն են եւ այսուհետեւ եւս պետք է ընդլայնեն իրենց համագործակցությունը այդ ուղղությամբ»: Նման հայտարարությամբ Պրիմակովը հանդես է եկել Իրանի նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի հետ հանդիպման ավարտին: Նա Ռաֆսանջանիին է փոխանցել Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի նամակը, որի մեջ կոչ է արվում Թեհրանի եւ Մոսկվայի միջեւ սերտ կապեր հաստատել տարածաշրջանային մի շարք, մասնավորապես աֆղանական եւ տաջիկական խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով:

Ի պատասխան Ռաֆսանջանին ասել է, թե երկկողմ հարաբերությունները կարգավորվեին Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի քաղաքական եւ տնտեսական անկախությունը, ինչպես նաեւ կարգավորված խաղաղությունն ու անդորրը տարածաշրջանում:

Պրիմակովը երեքշաբթի այցով Թեհրան է մեկնել կիրակի օրը, եւ սպասվում է, որ ստորագրվելու է երեք արձանագրություն Աֆղանստանի, Տաջիկստանի եւ Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ:

ՀԱՄԱՌՈՏ

Կառավարական ճգնաժամ Բուլղարիայում

ՍՈՖԻԱ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բուլղարիայի վարչապետ Ժ. Վիդենովը հրաժարական է տվել: Այս մասին նա հայտարարել է Բուլղարիայի կառավարող սոցիալիստական կուսակցության Սոֆիայում տեղի ունեցող արտահերթ համագումարում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, սոցիալիստների առաջնորդը հայտարարել է Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության բարձրագույն խորհրդի նախագահի պաշտոնից հեռանալու մտադրության մասին: Այս քայլը Ժ. Վիդենովը բացատրել է իր կաբինետի վարած տնտեսական քաղաքականության ձախողմամբ եւ վերջերս կայացած նախագահական ընտրություններում սոցիալիստների կրած լուրջ պարտությամբ:

Սուդեթյան գերմանացիների հարցը այս անգամ էլ չլուծվեց

Գերմանիայի եւ Չեխիայի արտգործնախարարները դեկտեմբերի 20-ին ստորագրեցին երկրորդ աշխարհամարտից հետո 2 երկրների միջեւ առկա տարաձայնությունները հարթելու մասին նախնական մի համաձայնագիր: Այդ համաձայնագրում Գերմանիան ափսոսանք է հայտնում 38–45 թվականներին Չեխիան գրավելու, իսկ Պրահան ափսոսանք է հայտնում Չեխիայում բնակվող այսպես կոչված սուդեթյան գերմանացիներին պատերազմից հետո երկրից արտաքսելու համար: Համաձայնագրին դեմ են մի քանի միլիոն սուդեթյան գերմանացիներ, որոնք պահանջում են կորցրած ունեցվածքը եւ ճանաչել իրենց մյուս իրավունքները: Չեխիայի որոշ շրջանակներ էլ բողոքում են, որ այս համաձայնագրով Գերմանիան չի պատասխանվում փոխհատուցել ֆաշիստական բռնազավթման հետեւանքով Չեխիային հասցված վնասները:

Էստոնիայում նվազագույն աշխատավարձը՝ 70 դոլար

ՏԱԼԼԻՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամսական 845 էստոնական կրոն կամ 70 դոլար, այսուհետ է նոր նվազագույն աշխատավարձը, որը կգործի եկող 1997 թվականին: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, այս մասին համաձայնագիր է կնքվել էստոնիայի կառավարության, գործատուների միավորման եւ հանրապետության արհմիությունների միջեւ: Նախկին նվազագույն աշխատավարձը կազմում էր 681 կրոն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Գնդապետ Ալեքսեյ Լեբեդը՝ Խակասիայի կառավարության նախագահ

ՄՈՍԿՎԱ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կիրակի օրը Ռուսաստանում տեղի ունեցան Դաշնության սուբյեկտների վարչակազմի ղեկավարների ընտրություններ:

Կրասնոդարի երկրամասի նահանգապետի կրկնական ընտրություններում վստահ հաղթանակ տարավ «Կրասնոդարգլավսնաբ» ՍՊԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Նիկոլայ Կոնդրատենկոն: Նրա հիմնական մրցակիցը՝ երկրամասի վարչակազմի ներկայիս ղեկավար Նիկոլայ Եգորովը ստացել է քվեների տոկոսի 5 տոկոսը:

Գնդապետ Ալեքսեյ Լեբեդը, որը հանդես էր գալիս որպես անկախ թեկնածու, Խակասիայի Հանրապետության կառավարության նախագահ ընտրվեց ընտրությունների կայացած երկրորդ փուլի ընթացքում: Ալեքսեյ Լեբեդը՝ ՈՂ անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Ալեքսանդր Լեբեդի եղբայրը, 41 տարեկան է: Նա Պետական դումայի պատգամավոր է:

Չելյաբինսկի մարզի վարչակազմի ղեկավարի ընտրություններում ընդդիմադիր ուժերը գլխավորող Պյոտր Սումինի հաղթանակը փաստորեն կապված չի հարուցում: Քվեարկության նախնական արդյունքների համաձայն, Սումինի օգտին է տվել քվեների 53,92 տոկոսը, իսկ մարզային վարչակազմի ներկայիս ղեկավար Վադիմ Սոլովյովի օգտին՝ 14,6 տոկոսը: Նա երկրորդ տեղում է ընթանում տասը թեկնածուների թվում:

Ռյազանի մարզի նահանգապետական ընտրությունների երկրորդ փուլում մեծ առավելությամբ հաղթանակ տարավ ժողովրդահայրենասիրական դաշինքի ներկայացուցիչ Վլադիսլավ Լյուբիմովը:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն Վոլգոգրադի մարզի նահանգապետի պաշտոնի հինգ թեկնածուներից ոչ մեկը չի ստացել ընտրողների բավարար պաշտպանությունը հաղթանակի համար: Հնարավոր է, որ դեկտեմբերի 29-ին կրկնական քվեարկություն անցկացվի: Առավել մեծ հանդիսությամբ քվեներ (37 տոկոս) է ստացել մարզային վարչակազմի ներկայիս ղեկավար Իվան Շաբունինը: Երկրորդ տեղում է ժողովրդահայրենասիրական ուժերի դաշինքի թեկնածու, Վոլգոգրադի հաղթային խորհրդի նախագահ, կոմունիստ Նիկոլայ Մախնուսան: 28,3 տոկոս, երրորդ հորիզոնականը գրաված է Վոլգոգրադի հաղթանակ դաշինքի Յուրի Չերկովը՝ 25,9 տոկոս: Հաղթանակի համար անհրաժեշտ է, որ թեկնածուն ստանա ընտրողների քվեների 50 տոկոսից ավելին:

Տյումենի եւ Կալուգայի մարզերի ընտրողները նույնպես երկրորդ անգամ են ներկայանալու ընտրատեղամասեր

ԱԶԳ

Մշակույթ

Ս իանբանակ է այն, որ կերդարը հավաքական չէ, զի ստեղծված է հենց «արվեստագետ» հասկացությունը. վաստակաշատ եւ անվաստակ «արվեստագիտին» ներկայումս կարելի է տեսնել ուրիշ խալի զամված, եւ այդ խալը երկու գերանի շահախնդիր միացումն է: Հոգու եւ ուղեղի դաշտկությունը նա փորձում է դարձրել «ազգանվեր գործունեության», որի արացդալանը դաշտնավարությունն է, լռությունը, անարերությունը, նկարչին անվայել խոհեմությունը, սանձահար վիճակը, վանդակված ազատությունը: Վիգեն Չալդրանյանի դարագան այլ է: Նա իր ֆիլմը նվիրում է «բաղաքի խենթ հոգիներին», որոնք միայնակ թափառում են ճահիճ դարձած բաղաքի երթեմնի փողոցներով եւ փորձում են չգորտանալ. Ամեն մի խենթ՝ մի Տիեզերք, եւ նրա համար «Տեր ողորմեան» ֆիլմ չէ, ինչպես եւ դիեն չէ «Համլետը», ու չխուսափենք նման զուգորդությունից: Խոսքը սկզբունքի մասին է... Յուրաքանչյուր նման գործ (հենակետի առումով) նոր լիցք է խենթի համար, բայց պե՞տք է արդյոք նրան այդ լիցքը: Պայքարո՞ղ է Վիգեն Չալդրանյանը, թե՞ հաշտվող... Ամենուս նա դայքարող է, եւ դայքարն այդ հենց իր լինելիությունն է առկայությունն այս աշխարհում: Եղանակները կարող են լինել տարբեր կարելի է հարթել, գժվել, հետ. նույնիսկ նահատակվել, սակայն միշտ անշեղ մնալ միակ ճամփից, որը եւ նկարչի փշոտ արահետն է: Չգորտանալ, չգայթակղվել, չուրանալ, դիմանալ, դահոդանվել, ինչպես կերդ դահել իր տեսակը... կա՞ արդյոք ուրիշ դայքար: Ոչ: Այա է Դամանակի թելադրանքը, չենթարկվել մուտացիայի եւ խնայել Ազնիվ գենը: Հիվանդ էր կերդարին կյանք տված սերմը, սակայն առողջ էր արգանդը, զի սերմը հասարակությունն է, իսկ արգանդը ազգը: Դա այն վիժվածքն է, որին հետագայում կոչում են Սուրբ ծնունդ, եւ նոր թվարկություն սկսում...

Քաղաք... մշակութային կյանքի էպիկենտրոն, որտեղ կա հասարակություն եւ կա Արտիստ, որտեղ կան Ակնջներ եւ կա Պոետ, որտեղ կան Աչքեր եւ կա Նկարիչ եւ այլն ու այլն: Հավասարակշռության խախտման դեպքում քաղաքը դադարում է քաղաք լինելուց դառնում է քաղաք լինելու դառնում կամ անբովանդակ բոհեմ կամ արտավայր: Երկու դեպքում էլ նույն աղքն է: Երեւանն այսօր արտավայր է, բայց Չալդրանյանի կերդարը չի ցանկանում թակել բոհեմական դարդասները: Նա չի ուզում հեռանալ հասարակությունից, որն ամբոխ է եւ միաժամանակ չի կարող հեռանալ իմն խենից... Անձի ճանաչման դահն ակնհայտ է: «Ի՞նչ անել», հարցնում է Չալդրանյանը, եւ այս հարցադրումը ֆիլմի լեյտմոտիվն է:

Բայց չէ՞ որ քաղաքը, վերջ ի վերջո, խենթն է, չէ՞ որ նա է քաղաքի Տերը, կամ գոնե կոչված է լինել այդդիսին: Սակայն ինչո՞ւ, եղբայր, անզոր ես ցամաքեցնել ճահիճը՝ այն դարձնել, օրինակ բավոս: Ո՞ւր է քո զանը եւ որտե՞ղ է բագդ, ո՞ր երկրներում է գորդ... Հերթական բագավոր արտահերթը մահն է: Ֆիլմում կերդարն ունի մեկ-երկու ընկեր, ընդհանուր առմամբ նրանք վատը չեն, սակայն բացառակ խասատով լույլ են: Նրանք ինչ-որ կերդ հարմարվել են ներկային, եւ նման հարմարվողականությունը դատապարտման ենթակա չէ: Բանն այն է, որ նրանք, լող եւ լինելով ու կոչվելով «դերասան» կամ «նախկին արվեստագետ», ի սկզբանե եղել են անատաֆինի. նրանցից կոդիս ասած, սդասելիք էլ չկար: Նիցշեական ժամանակներում լավագույն ընկերը անկոտրում գաղափարակիցն է:

Կիերկեգորը ժամանակին գրել է «մահվան սարսափի» մասին. նա իր չափով վերլուծել է իմն աղանության ֆենոմենը, կաղելով այն հուսահատության կամ հուսաբեկության հետ: Ոչ թե աղատիա կամ դեդրեսիա, որոնց դարբերականությունը հարազատ է ամեն երկոտանու, անկաղությունը, անհետաքրքրությունը, նա բնականաբար դեմ է հեռանա: Դա տրամաբանական ելք է, որը բացառվում է նաեւ կենսաբանորեն: Բայց մի՞թե տակ կենսաբանական է հարցը: Մահն իմն ստեղծագործական ծես է, արվեստագետի իմն աղանությունն առավել եւս: Դա խորհուրդ է եւ ճանաղարհ, որը չգիտես թե որ է տանում: Եւ ամփոդոդից էլ, ասենք, շատ բան է կախված:

Վիգեն Չալդրանյանն իմն աղանության աղդոդքն չէ: Նա գիտի աղրել, շնչել եւ արտաշնչել, ուրախանալ եւ վշտանալ: Նա կարող է այդ մասին դասընթացներ կարդալ, բայց ո՞ւմ: Բոլորն էլ կարծես թե շնչում եւ արտաշնչում են, ուրախանում եւ վշտանում... Կրկին փակուղի: Ո՞վ է մեղավոր, եւ կա՞ արդյոք արանում մեղք: Չգիտեմ...

Էկր. Չալդրանյանի ֆիլմում դառնում է կին: Հաղթանակն ակնհայտ է: Տղամարդը չի դառնում որձ: Հաղթանակն ակնհայտ է: Արվեստագետը չի դառնում մուրացկան: Հաղթանակն ակնհայտ է... Սակայն ի՞նչ հաղթանակ, ո՞ւմ նկատմամբ, որտե՞ղ, ե՞րբ...

Վիգեն Չալդրանյանի կերդարը նյութապես անապահով խալի խորհրդանիշը չէ: Ոչ մի դեդրում: Եվ նա սովից չէ, որ իմն աղան եղավ: Նա սովորական նկարիչ է, առանց որեւէ սիմվոլիկայի: Ամեն ինչ շատ դարզ է եւ հասկանալի... Քաղաքի տերն այսօր ուսիկանն է, եւ արանում նույնդես հարցականության ոչ մի հասիկ: Ինչդես ֆիլմում, այնդես էլ իրականության մեջ: Ֆիլմը ոչ գեղեցիկ է, ոչ հուսադրող, եւ վերջ ի վերջո, հանգում ես նրան, որ ոչ մի ֆիլմ էլ չես տեսել:

ԱԲԻՄ ՂԱՀԻԼՅԱՆ

«Տեր ողորմեա». Միա՞յն քաղաքի ռեքվիեմ

Կինոդիտողի տպավորությունից...

Ո՞վ է Վիգեն Չալդրանյանը «Տեր ողորմեա» ֆիլմում, ո՞վ է նրա հերոսը, հավաքական կերդա՞ր է, թե անհատ, դայքարո՞ղ է, թե հաշտվող, ժամանակի ծնո՞ւնդ, թե՞ վիժվածք, սկզբո՞ւռ է ծոտիկ անիվում, թե՞ վարակ տարածության մեջ, ո՞ւմ է նա ծառայում, հասարակությա՞նը, թե՞ ազգին, ո՞րն է նրա առաքինությունը համլետիզմի (կարելի է նաեւ Վերթերի եւ ինչո՞ւ ոչ Եսենինի) տարածո՞ւմը, թե՞ մուրացկանի դարագիտիզմը...

Քաղաքի մշակութային կյանքի էպիկենտրոն, որտեղ կա հասարակություն եւ կա Արտիստ, որտեղ կան Ակնջներ եւ կա Պոետ, որտեղ կան Աչքեր եւ կա Նկարիչ եւ այլն ու այլն: Հավասարակշռության խախտման դեպքում քաղաքը դադարում է քաղաք լինելուց դառնում է քաղաք լինելու դառնում կամ անբովանդակ բոհեմ կամ արտավայր: Երկու դեպքում էլ նույն աղքն է: Երեւանն այսօր արտավայր է, բայց Չալդրանյանի կերդարը չի ցանկանում թակել բոհեմական դարդասները: Նա չի ուզում հեռանալ հասարակությունից, որն ամբոխ է եւ միաժամանակ չի կարող հեռանալ իմն խենից... Անձի ճանաչման դահն ակնհայտ է: «Ի՞նչ անել», հարցնում է Չալդրանյանը, եւ այս հարցադրումը ֆիլմի լեյտմոտիվն է:

Բայց չէ՞ որ քաղաքը, վերջ ի վերջո, խենթն է, չէ՞ որ նա է քաղաքի Տերը, կամ գոնե կոչված է լինել այդդիսին: Սակայն ինչո՞ւ, եղբայր, անզոր ես ցամաքեցնել ճահիճը՝ այն դարձնել, օրինակ բավոս: Ո՞ւր է քո զանը եւ որտե՞ղ է բագդ, ո՞ր երկրներում է գորդ... Հերթական բագավոր արտահերթը մահն է: Ֆիլմում կերդարն ունի մեկ-երկու ընկեր, ընդհանուր առմամբ նրանք վատը չեն, սակայն բացառակ խասատով լույլ են: Նրանք ինչ-որ կերդ հարմարվել են ներկային, եւ նման հարմարվողականությունը դատապարտման ենթակա չէ: Բանն այն է, որ նրանք, լող եւ լինելով ու կոչվելով «դերասան» կամ «նախկին արվեստագետ», ի սկզբանե եղել են անատաֆինի. նրանցից կոդիս ասած, սդասելիք էլ չկար: Նիցշեական ժամանակներում լավագույն ընկերը անկոտրում գաղափարակիցն է:

Կիերկեգորը ժամանակին գրել է «մահվան սարսափի» մասին. նա իր չափով վերլուծել է իմն աղանության ֆենոմենը, կաղելով այն հուսահատության կամ հուսաբեկության հետ: Ոչ թե աղատիա կամ դեդրեսիա, որոնց դարբերականությունը հարազատ է ամեն երկոտանու, անկաղությունը, անհետաքրքրությունը, նա բնականաբար դեմ է հեռանա: Դա տրամաբանական ելք է, որը բացառվում է նաեւ կենսաբանորեն: Բայց մի՞թե տակ կենսաբանական է հարցը: Մահն իմն ստեղծագործական ծես է, արվեստագետի իմն աղանությունն առավել եւս: Դա խորհուրդ է եւ ճանաղարհ, որը չգիտես թե որ է տանում: Եւ ամփոդոդից էլ, ասենք, շատ բան է կախված:

Վիգեն Չալդրանյանն իմն աղանության աղդոդքն չէ: Նա գիտի աղրել, շնչել եւ արտաշնչել, ուրախանալ եւ վշտանալ: Նա կարող է այդ մասին դասընթացներ կարդալ, բայց ո՞ւմ: Բոլորն էլ կարծես թե շնչում եւ արտաշնչում են, ուրախանում եւ վշտանում... Կրկին փակուղի: Ո՞վ է մեղավոր, եւ կա՞ արդյոք արանում մեղք: Չգիտեմ...

Էկր. Չալդրանյանի ֆիլմում դառնում է կին: Հաղթանակն ակնհայտ է: Տղամարդը չի դառնում որձ: Հաղթանակն ակնհայտ է: Արվեստագետը չի դառնում մուրացկան: Հաղթանակն ակնհայտ է... Սակայն ի՞նչ հաղթանակ, ո՞ւմ նկատմամբ, որտե՞ղ, ե՞րբ...

Վիգեն Չալդրանյանի կերդարը նյութապես անապահով խալի խորհրդանիշը չէ: Ոչ մի դեդրում: Եվ նա սովից չէ, որ իմն աղան եղավ: Նա սովորական նկարիչ է, առանց որեւէ սիմվոլիկայի: Ամեն ինչ շատ դարզ է եւ հասկանալի... Քաղաքի տերն այսօր ուսիկանն է, եւ արանում նույնդես հարցականության ոչ մի հասիկ: Ինչդես ֆիլմում, այնդես էլ իրականության մեջ: Ֆիլմը ոչ գեղեցիկ է, ոչ հուսադրող, եւ վերջ ի վերջո, հանգում ես նրան, որ ոչ մի ֆիլմ էլ չես տեսել:

ԱԲԻՄ ՂԱՀԻԼՅԱՆ

Փարաջանովի «Սայաթ Նովա» ժապավենը ցուցադրել են Գերմանիան եւ Թուրքիան

ԵՐԵՎԱՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՅԱՊԱՆ. Սեպտեմբերի «Մարմարան» հաղորդում է, որ դեկտեմբերի 22-ին հայկական ֆիլմաշարի երեքանկներում գերմանական ՍԱԳ-3 հեռուստակայանի ցուցադրած Փարաջանովի «Սայաթ Նովա» հայերեն ֆիլմը հեռարձակվել է նաեւ թուրքական հեռուստատեսությամբ:

Կոմպոզիտորների միության մրցանակը Սվետլանա Սարգսյանին

ԱՐՄԵՆՊՐԵՍ տեղեկացնում է, որ Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության անդամ, Երեւանի Կոմիտաս կոնսերվատորիայի պրոֆեսոր, երաժշտագետ Սվետլանա Սարգսյանը վերջին երկու տարիների առանձնակի բեղուն գործունեության համար արժանացել է այդ միության հատուկ մրցանակին: Մրցանակի հովանավորն է Հայաստանի միջազգային հեռակապակցային վերականգնողական կենտրոնը: «Ազգը» ջերմորեն շնորհավորում է իր աշխատակցին, ակնկալելով հետաքրքիր հոդվածներ եւ ոչ միայն թերթում նոր գրքեր եւ մրցանակներ:

Ցուցահանդես Կարապետ Տիրատուրյանի հոբելյանին

Լրացավ ԺԳ արվեստի վաստակավոր գործչի (1960), ժողովրդական նկարիչ (1967) Կարապետ Տիրատուրյանի ծննդյան 85-ամյակը: Սակերեսելով գրի ձեւավորող հայտնի կոչումներ ունեցող Կ. Տիրատուրյանն ավելի քան քառասուն տարի նվիրվեց գրահրատարակչական գործին՝ ձեւավորելով շուրջ 1200 անուն գիրք: Դրանք հայ դասական եւ ժամանակակից գրողների, պատմաբանների եւ ուրիշ գործիչների երկերն ու թարգմանական գրականության ընտիր նմուշներն են: Նրա տեւական որոնումների արդյունքն եղավ «Հայոց գիրը» գիրքը, որը պարունակում է 400 տառատեսակ եւ տառանմուշ: Այնտեղ ամփոփված են նաեւ հեղինակի ձեւավորած ու նկարազարդած գրքերի մի շարք օրինակներ: Այսօր, դեկտեմբերի 24-ին, ժամը 13-ին Հայաստանի Ազգային գրադարանում կբացվի Կ. Տիրատուրյանի ձեւավորած գրքերի ցուցահանդեսը, ուր ներկայացված են նաեւ նկարներ, ասույթներ, ընծայագրեր, որոնց հեղինակները բարձր են գնահատում նկարչի ծառայություններն ու ձեւավորումների բարձրարվեստ կատարումները:

Հ. Հ.

Կոնստանդին Սիմոնյան. 30 տարի բեմի վրա

Դեկտեմբերի 22-ին, Ազգային օպերայի եւ բալետի թատրոնի հայելապատ սրահում տեղի ունեցավ թատրոնի մեներգիչ Կոնստանդին Սիմոնյանի համերգը, որ նվիրված էր նրա ստեղծագործական գործունեության 30-ամյակին: «Ժաման այս օրերին ցանկանում եմ ձեզ փոխանցել ջերմություն, սեր հավատ: 30 տարի է բեմի վրա եմ եւ ամեն անգամ սրտությամբ եմ հիշատակում պրոֆեսոր Թամար Շահնազարյանի անունը: Եվ եթե այսօր կարող եմ հանդիսատես դառնալ հանդիսատեսին, ապա նրա շնորհիվ», համերգի վերջում նշեց մեներգիչը: Հնչեցին հայկական, հունգարական, ուկրաինական ժողովրդական երգեր, ռոմանսներ, դեմերգեր՝ օպերաներից: Երգչին նվագակցում էին Ազգային օպերային թատրոնի կամերային նվագախումբը՝ դիրիժոր Վիլեն Չարլզոյանի ղեկավարությամբ եւ դաշնակահարուհի Արինա Սարգսյանը:

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՒՅԺ

Յուրի Երզնկյան

75-ամյակի նախաշեմին կյանքից հեռացավ հայ կինոյի երախտավորներից մեկը՝ կինոբեմադրիչ Յուրի Երզնկյանը:

Ծնվել է 1922 թվականին հայտնի դեսական եւ քաղաքական գործիչ Արամայիս Երզնկյանի ընտանիքում: 15 տարեկանում դատանին զրկվեց հորից, որը դարձավ 1937 թվականի ահաբեկչությունների զոհ: Եվ միայն բնածին օժտվածության եւ նդատակասլացության շնորհիվ Յու. Երզնկյանին հաջողվեց մտնել արվեստի ոլորտ: Սկզբում ձեւավորեց մի շարք ներկայացումներ, իսկ 1943 թվականից իր ճակատագիրը կապեց հայ կինեմատոգրաֆի հետ:

Առաջին կինոբեմադրիչի ձեւավորմանը նդաստեցին այն տարիները, որ Երզնկյանն անցկացրեց դատերազմից հետո, Մոսկվայում, մի խումբ շնորհալի հայ երիտասարդների հետ: Խումբը գործուղվել էր Մոսկվայի մշակույթի տուն կատարելագործվելու: Իր ուսուցիչներից Յու. Երզնկյանն առանձնացնում էր Ռուբեն Սիմոնովին եւ Միխայիլ Ռոմմին:

50 թվականների վերջին Յու. Երզնկյանն արդեն հայ հայտնի կինոռեժիսորներից էր: «Առաջին սիրո երգը» (Լաերտ Վաղարշյանի հետ համատեղ) եւ «Իմ ընկերոջ մասին» ֆիլմերը լայն ճանաչում ստացան նաեւ հանրապետության սահմաններից դուրս: Ավելի քան 40 տարվա ընթացքում Յու. Երզնկյանը նկարահանել է բազմաթիվ խաղարկային, հեռուստատեսային եւ վավերագրական ֆիլմեր: Իսկ 70 թվականներին նրա ստեղծած «Խաթաբալան» եւ Ա. Թրուայայի «Սգավոր ծյունը» հոգեբանական դրաման կարող են դասվել հայ կինոարվեստի լավագույն նվաճումների շարքին: Ընտիր ճաշակը եւ նրբին դատկերը ստեղծելու հակվածությունը՝ թերեւս Երզնկյանի ստեղծագործական ձեռագրի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն է:

1974 թվականին Յու. Երզնկյանին հայ կինոյին մատուցած ծառայությունների համար շնորհվեց հանրապետության ժողովրդական արտիստի կոչում, իսկ 1979 թվականին՝ Պետական մրցանակ:

Պրոդող խառնվածքը, եռանդուն բնավորությունը Երզնկյանին թույլ չէին տալիս, որ սահմանափակվի գործունեության մեկ ասպարեզով: Ավելի քան 20 տարի դասավանդում էր Ս. Բռվյան մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետում, զբաղեցնելով կինոֆոտովարպետության ամբիոնի վարիչի եւ պրոֆեսորի պաշտոնները: Յու. Երզնկյանի աշակերտներից մի քանիսն այսօր ամուր դիրք են գրավել հայ կինոյում: Յու. Երզնկյանը ստեղծեց եւ ղեկավարեց Հայաստանի կինոկրթության գործիչների ասոցիացիան: Միայն նրա անձնական եռանդի շնորհիվ էր վերջին տարիներին հրապարակվում «Կինո» պարբերականը: Յուրի Երզնկյանը Հայաստանի Գիտության ազգային միության անդամ էր, իսկ 1994-96 թթ. Թեթեյան միության նախարարության անդամ: Մահը վրա հասավ Մոսկվայում, որտեղ մասնակցում էր Սոնո Բաբաջանյանին նվիրված միջոցառումներին:

Էմմա Ծատուրյան

ԵՐԵՎԱՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Դեկտեմբերի 23-ին Դոնեցկում, 76 տարեկանում վախճանվեց Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ Էմմա Ծատուրյանը:

Մասնագիտական կրթությունն ստանալով Երեւանում, Կոմիտաս կոնսերվատորիայի պրոֆեսոր Թաքուլ Ալթունյանի ղեկավարությամբ, Էմմա Ծատուրյանը մինչ մահ նվիրվեց հայկական երգչախմբային արվեստին, այն ներկայացնելով հանրապետության սահմաններից դուրս:

1958 թվականից Էմմա Ծատուրյանը Հայաստանի երաժշտական ընկերության (նախկին երգչախմբային) ղեկավար պաշտոններում էր, որտեղ նրա հիմնադիր պատասխանատու քարտուղար, ապա՝ նախագահի առաջին տեղակալ եւ նախագահ: Արվեստագետը Արամ Տեր-Հովհաննիսյան երգչախմբի անփոփոխ ղեկավարն էր, 12 տարի եղել է Թաքուլ Ալթունյան հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլի գեղարվեստական ղեկավարը:

Երգչախմբային գործունեությանը զուգընթաց պրոֆեսոր Էմմա Ծատուրյանը մանկավարժական ակտիվ գործունեություն էր ծավալել Խ. Ս. Բռվյան հայկական դեսական մանկավարժական ինստիտուտում, իր հարուստ փորձը հաղորդելով երիտասարդ մասնագետներին:

ՔԱՐԻՔ

Ֆրանսահայ գրականության երեկո

Դեկտեմբերի 18-ին «Համազգայինի» Փարիզի մասնաճյուղի գրական հանձնախումբը «Ալեք Մանուկյան» մշակութային կենտրոնում, կազմակերպել էր սփյուռքահայ, մասնավորապես ֆրանսահայ գրականության հարցերին նվիրված երեկո:

Բանախոսը բանաստեղծ, փիլիսոփայության եւ գրականության դոկտոր Գրիգոր Պլյանը, խոսելով 1922-75թթ. հրապարակված «Անահիտ», «Մենք», «Կյանք եւ արվեստ», «Հայկաբեն», «Զվարթնոց», «Արազանի» եւ այլ հանդեսներում հրապարակված հանդեսների մասին նշել է նրանցից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը գրականության զարգացման գործում: Բանախոսը վերլուծելով ֆրանսահայ գրականությունը, անդրադարձել է սփյուռքահայ գրականության մեջ վերջինիս դերին, բնութագրելով հանրակական ու տարբերակային հատկանիշները: Նա ներկաների ուշադրությունն է հրավիրել սփյուռքահայ գրական մամուլի սակավաթիվ լինելու հանգամանքի վրա այս երեւույթը բացատրելով ինչպես նյութական դաշտառներով, այնպես էլ համադասական գրական մթնոլորտի բացակայությամբ:

ԿԱՐԻՆԷ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Դամք» օրաթերթ,
21 դեկտեմբերի 1996թ.

ԱՀԳ

Մարզական

ՏԱՐԵՎԵՐՁ

Օլիմպիական չեմպիոնը 1996 թ. Հայաստանի լավագույն մարզիկն է

Լրագրողներն այս որոշումը ընդունեցին միաձայն

Ավանդության համաձայն, տարեվերջին, հանրապետության մարզական լրագրողները որոշեցին Հայաստանի 10 լավագույն մարզիկներին: Հարցմանը մասնակցեցին մարզական թեմայով գրող գրեթե բոլոր լրագրողները: Կասկած չէր հարուցում, որ լավագույն մարզիկ է ճանաչվելու մրցաշրջանի ամենագլխավոր մենարկի: Ատլանտայի օլիմպիական խաղերի հերոս, հունա-հռոմեական ոճի ըմբիշ Արմեն Նազարյանը: Պարզ էր նաեւ, որ նրան հետեւելու է օլիմպիադայի արծաթե մրցանակակիր, ազատ ոճի ըմբիշ Արմեն Մկրտչյանը: Լավագույն տասնյակում մյուս մարզիկների համապատասխան տեղեր գրավելու շուրջ լրագրողները տարբեր կարծիքներ ունեին: Եվ ահա, հարցաթերթիկում նշված մարզիկների օգտին տրված ձայների պարզ հաշվումով որոշվեցին 1996 թվականի մարզաչխարհի հայ 10 հերոսները: Ահա, թե ովքեր են այս տարի հաճելի լարվածության մեջ պահել եւ հիացմունք պատճառել ոչ միայն մեր հանրապետության, այլեւ մոլորակի տարբեր երկրների մարզասերներին:

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ (52 կգ)
Հունա-հռոմեական ըմբշամարտ
1974 թ., Արարատի մարզ. f. Մասիս. «Հայաստան» ՄՄ
1996 թ. օլիմպիական չեմպիոն
1996 թ. Եվրոպայի առաջնության արծաթե մրցանակակիր
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Ռ. Աբրյան

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ (48 կգ)
Ազատ ոճի ըմբշամարտ
1973 թ., Արարատի մարզ. f. Արարատ. «Հայաստան» ՄԸ
1996 թ. օլիմպիական խաղերի փոխչեմպիոն
1996 թ. Եվրոպայի առաջնության արծաթե մրցանակակիր
մարզիչներ՝ հանրապետության վաստակավոր մարզիչներ Յու. Բաբայան եւ Հ. Ենոքյան

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Եռաստակ
1969 թ. Շիրակի մարզ. f. Գյումրի. «Հայաստան» ՄՄ
1996 թ. Եվրոպայի ձմեռային առաջնության 3-րդ մրցանակակիր
1996 թ. Ատլանտայի օլիմպիական խաղերում գրավել է 5-րդ տեղը
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Հ. Ստեփանյան

ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ (68 կգ)
Ազատ ոճի ըմբշամարտ
1973 թ., Արարատի մարզ. գ. Քաղցրաշեն. «Սեւան» ՄՄ
1996 թ. Եվրոպայի առաջնության արծաթե մրցանակակիր
1996 թ. Ատլանտայի օլիմպիական խաղերում գրավել է 5-րդ տեղը
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Ռ. Գոլեցյան

ԳԱԳԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ (68 կգ)
Սամբո
Լոռվա մարզ. f. Վանաձոր. «Դինամո» ՄԸ

1996 թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր
1996 թ. աշխարհի չեմպիոն
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Դ. Սարոյան

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ
(միջազգային գրոսմայստեր)
Շախմատ
f. Երեւան
1996 թ. Եվրոպայի առագաստախումբի անդրանիկ առաջնության բրոնզե մրցանակակիր
1996 թ. Լինարեսի, Բարսելոնի եւ Բեռլինի միջազգային մրցաշարերի հաղթող

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ (52 կգ)
Սամբո
f. Երեւան, սամբոյի եւ ձյուդոյի ՕՀՀՄԴ
1996 թ. աշխարհի չեմպիոն
1996 թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Թ. Շահիբազյան

ՍՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ* (108 կգ)
Ճանրամարտ
f. Էջմիածին. «Հայաստան» ՄՄ
1996 թ. աշխարհի երիտասարդական առաջնության հաղթող
1996 թ. Եվրոպայի երիտասարդական առաջնության արծաթե մրցանակակիր
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Փ. Ալավերդյան

ՄԽԻԹԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ (62 կգ)
Հունա-հռոմեական ըմբշամարտ
Շիրակի մարզ. f. Գյումրի. «Հայաստան» ՄՄ
1996 թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր
1996 թ. Ատլանտայի օլիմպիական խաղերում գրավել է 7-րդ տեղը
1996 թ. աշխարհի չեմպիոն
մարզիչ՝ հանրապետության վաստակավոր մարզիչ Յու. Կարապետյան

ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (67 կգ)
Քիքբոքսինգ
f. Երեւան, «Առենալ» մարզակումբ
1996 թ. Եվրոպայի չեմպիոն
1996 թ. ԱՊՀ չեմպիոն
մարզիչ՝ Ա. Հայրապետյան

ՀԱԽՄԱՏ

Կասպարովն ապացուցեց, որ ինքը լավագույնն է

Լաս Պալմասում վերջնագիծը հասեց շախմատի ավանդական «Գրան Կանարիե» գերմրցաշարը: Վերջին 10-րդ տուրում, արհեստավարժ շախմատային ասոցիացիայի գծով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը խաղաղ դաշն կնքեց հնդիկ գրոսմայստեր Վիշվանաթան Անանդի հետ: Նույնպիսի ելք ունեցավ նաեւ Վլադիմիր Կրամնիկի եւ ՖԻԴԵ-ի աշխարհի չեմպիոն Անատոլի Կարպովի մրցավեճը: Բուլգարացի Վեսելին Թոփալովը հաղթեց ուկրաինացի Վասիլի Իվանչուկին: Այսպիսով, մրցաշարային երկար մրցադաշտերից հետո, 10 հնգաձավորից վաստակելով 6,5 միավոր, հաղթող դարձավ Կասպարովը: Նրանից 1 միավորով հետ մնաց երկրորդ տեղը գրաված Անանդը: 5-ական միավոր իրենց հաշվին գրանցեցին Կրամնիկը եւ Թոփալովը, որոնք կիսեցին երրորդ հորիզոնականը: Շատերի համար անսպասելիորեն, 4-ական միավորով չորրորդ տեղը գրավեցին Կարպովը եւ Իվանչուկը:

Հայ սուսերամարտիկների մրցումներին հետեւեց Ֆրանսիայի դեսպանը

Սպորտվարչության լրատվական ծառայությունից տեղեկացանք, որ «Հայաստան» ՄՄ Նորագավիթի սուսերամարտի մասնագիտացված մարզադպրոցում ավարտվեց մարզաձեւի Հայաստանի գավաթի խաղարկությունը: Մարտուղի էին դուրս եկել մոտ 80 հրացանակիրներ, այդ թվում բոլոր ուժեղագույնները:

Ճկասուսերի մրցումներում տղամարդկանցից կրկին իրեն հավասար չունեցավ փորձառու Գեղամ Հովհաննիսյանը: Գեղեցիկ սեռի ներկայացուցիչներից զինաբեսակը բոլորից հմուտ օգտագործեց երիտասարդ, խոստումնալից մարզուհի Աննա Ստեփանյանը: Խոցասուսերակիրներից ամենահաջողը հանդես եկավ Արթուր Խալաթյանը եւ Լուսինե Խալաթուրովան: Թրասուսերի մրցումներում հարաբերությունները ավանդաբար որոշեցին միայն տղամարդիկ: Նրանց դայֆարում մրցակցությունից դուրս էր Սամվել Պողոսյանը:

Հետաքրքիր է, որ մրցավայր էր ժամանել Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան իր դստեր հետ, որը նույնպես զբաղվում է սուսերամարտով:

Նախախնամությունը՝ Սաուդյան Արաբիայի հավաքականի հովանավոր

Աբու Դաբիում ավարտվեց Ասիայի ֆուտբոլի գավաթի խաղարկությունը: Եզրափակիչում Սաուդյան Արաբիայի հավաքականը առավելության հասավ տանտերերի ԱՄԷ ֆուտբոլիստների նկատմամբ: 84-րդ րոպեին, 19 ամյա դաշտային Էլ-Սալայմանիի, ձեռքով խաղի համար դաշտից հեռացումը չփոխեց հանդիպման դատկերը: Սաուդյան ֆուտբոլիստները կարողացան դիմակայել եւ անարիկ դահել սեփական դարպասը, թեեւ չգրավեցին նաեւ մրցակցինը: Հիմնական եւ լրացուցիչ ժամանակում մրցամարտի հաշիվը այդպես էլ չբացվեց. II մետաղնոց հարվածների «վիճակախաղում» սկզբից աչքի ընկան դարպասադահները, այնուհետեւ տեղացի ֆուտբոլիստների կողմ Հասան Ահմեդը հաջողացրեց հարվածել դարպասածողին: 4-2 հաշվով, II մ հարվածներով, հաղթեցին սաուդցիները: Հետաքրքիր է, որ երրորդ տեղի համար խաղում հաղթողը եւս որոշվեց II մ հարվածներով: Իրանի եւ Հունգարիայի ընտրանիների մրցավեճի հիմնական եւ լրացուցիչ ժամանակները ավարտվեցին ոչ ոքի 1-1. Լրացուցիչ II մ հարվածները առավել դիտակ իրացրեցին իրանցիները (3-2), որոնք էլ նվաճեցին բրոնզե դարգեւները: Ի դեպ, վճռական 4 խաղերից երեքում հաղթողը որոշվեց ֆուտբոլային «վիճակախաղով»: Ընդ որում, երեք դեպքերից երկուսում հաջողությունն ուղեկցեց արդարադ չեմպիոնին՝ Սաուդյան Արաբիայի թիմին: Դե եկ եւ մի հավատա նախախնամությունը: Ուշադրության է արժանի եւս մի փաստ: Նախկինում ասիական ֆուտբոլում եղանակ էին ստեղծում հեռավորարեւելյան թիմերը, մինչդեռ Մերձավոր Արեւելքի երկրների հավաքականները հեռու դիրքերում էին: Այժմ դատկերը 180 աստիճանով շրջվել է: Նման երեւույթի դատճառը շատերը բացատրում են արաբական աշխարհի երկրների կենսամակարդակի կտրուկ աճով:

ԱՍՏՂԵՐ

Նիգերիացի Նվանկու Կանուն՝ Աֆրիկայի լավագույն ֆուտբոլիստ

ՀԱՄԻ ՄՈՒՍՈՔՅԱՆ

Վերջերս ԱՄՆ կլինիկաներից մեկում արդի վիրահատության ենթարկված Ատլանտայի օլիմպիական խաղերի ոսկե մրցանակակիր Նվանկո Կանուն ճանաչվեց անցնող մրցաշրջանի Աֆրիկայի լավագույն ֆուտբոլիստ:

Մրցանի «ինտերնացիոնալ» ամսագրի «աստղը» այս լուրը իմացավ հիվանդանոցում: Առայժմ հայտնի չէ, թե Կանուն կկարողանա՞ վերադառնալ իր նախկին մարզավիճակին եւ նույնիսկ երբեւէ դուրս կգա՞ խաղադաշտ: 20-ամյա նիգերիացին Ամստերդամի «Այաքսի» կազմում դարձել էր անցյալ տարվա Չեմպիոնների լիգայի հաղթող, իսկ Նիգերիան աֆրիկյան առաջին երկիրն էր, որ դարձավ օլիմպիական չեմպիոն:

Կանիրեում կայացած աֆրիկյան ֆուտբոլի միության տեխնիկական հանձնաժողովը որոշեց «սեւ» աշխարհամասի 10 լավագույն ֆուտբոլիստներին:

1. Նվանկու Կանու («Ինտեր», Միլան, Նիգերիա)
2. Ջորջ Վեա («Միլան», Լիբերիա)
3. Դանիել Ամոկաչի («Բեշիքթաշ», Սամսուն, Նիգերիա)
4. Մարկ Ֆիշ («Լացիո», Հռոմ, ՀԱՀ)

5. Ջորջ Ֆինիդի («Բեշիա» (Իտալիա), Նիգերիա)
6. Էաֆեե Նդորամ («Նանս» (Ֆրանսիա), Չադ)
7. Կալուա Բուալիա («Ամերիկա», Մեխիկո, Զամբիա)
8. Էմանուել Ամունիկե («Սպորտինգ», Լիսաբոն, Նիգերիա)
9. Սանդեյ Օլիսեհ («Ֆյոլն» (Գերմանիա), Նիգերիա)
10. Էդոնի Եբուա («Լիդս Յունայթեդ» (Անգլիա), Գանա)

ՀԱՄԱՌՈՏ

Շվեդիայի հավաքականը՝ «Իզվեստիայի» մրցաշարի հաղթող

Ռուսաստանի հոկեյի հավաքականը չկարողացավ «Իզվեստիայի» մրցաշարում հաղթանակով նշել ռուսական հոկեյի կեսդարյա հոբելյանը: Եզրափակիչ մրցամարտում ռուսները 1-3 հաշվով զիջեցին շվեդներին: Մինչդեռ մրցաշարում հաղթելու համար ռուս հոկեյիստներին բավական էր ոչ-ոքի խաղալ: Առաջին խաղափուլն անցավ սուր գոհներով եւ արդեն պարզ էր, որ շվեդների խաղը լավ է դիտվում թիմային խաղում: Երկրորդ խաղափուլն ապացուցեց դա, երբ երկու տափօղակ հայտնվեց ռուսական դարպասում: Սկզբում հաջողության հասավ էմունդը, իսկ այնուհետեւ դիտուկ նետում կատարեց Սվարտվադենը: Վճռական երրորդ խաղափուլում ռուսները նետվեցին հետ բերելու կորցրածը: Թվում էր, դա նրանց կհաջողվի, հատկապես Յարոֆեեւի դիտուկ նետումից հետո: Սակայն, վերջին վայրկյաններին «Տրե կրունուի» հոկեյիստները մեծացրեցին տարբերությունը՝ 3-1: «Իզվեստիա» թերթի մրցանակների խաղարկության 29-ամյա պատմության մեջ առաջին անգամ գլխավոր պարգեւը կստեղափոխվի Շվեդիա: Երկրորդ հորիզոնականին է Ռուսաստանի թիմը, երրորդ տեղում ֆիններն են:

Ռուսական հոկեյը 50-ամյա փառավոր ուղի է անցել

Մոսկվայում տեղի ունեցավ ռուսական հոկեյի հիմնադրման՝ 50-ամյակին նվիրված հանդիպումներ: Հրապարակվեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի ողջույնը, որը բոլորին շնորհավորեց փառավոր հոբելյանի կապակցությամբ: Լատվիայի հավաքականը, որը հիմնականում ներկայացված էր հոկեյի ռուսական դպրոցի սաներով, 7 անգամ դարձել է օլիմպիական չեմպիոն, 22 անգամ նվաճել աշխարհի չեմպիոնի ոսկե մեդալները: Թեեւ այսօր ռուսական հոկեյը ծանր օրեր է ապրում, սակայն մնում է այս երկրի ազգային հպարտությունը: Բորիս Ելցինը իր հրամանագրով բազմաթիվ մարզիչների, հոկեյիստների եւ հոկեյի բնագավառում աշխատող հասարակական գործիչների պարգեւատրեց շքանշաններով եւ մեդալներով: Ռուսաստանի հոկեյի ֆեդերացիան հրապարակեց վերջին 50 տարիների ռուս լավագույն հոկեյիստների ցուցակը՝ դարպասապահներ՝ Նիկոլայ Պուչկով, Վիկտոր Կոնովալենկո, Վլադիսլավ Տրետյակ դաշտապաններ՝ Նիկոլայ Սոլոգուբով, Իվան Տրեգուբով, Ալեքսանդր Ռագուլին, Վիկտոր Կուզին, Վալերի Վասիլեւ, Վյաչեսլավ Զասլավսկի, հարձակվողներ՝ Վսեվոլոդ Բոբրով, Ալեքսեյ Գորչուն, Բենիամին Ալեքսանդրով, Բորիս Մայորով, Վյաչեսլավ Սետարինով, Անատոլի Ֆիրսով, Բորիս Միխայլով, Վալերի Խարլամով, Ալեքսանդր Մալցեւ: Մարզիչներ՝ Արկադի Չերնիշով, Անատոլի Տարասով, Վիկտոր Տիխոնով:

Ալպերում թեժ դայքար ծավալվեց

Լեռնադահուկորդները աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլն անցկացրեցին Ալպերում: Կանայք ուժերը չափեցին Շվեյցարիայում: Նախ դրամատիկ ելույթում լավագույն արդյունքը գրաց ավելց շվեդուհի Պերմիլա Վիբերգը: Երկրորդ տեղը գրավեց ավստրիական ծագմամբ նորվեգացուհի Կլաուդիա Իլցերը: Նրանց եզրափակեց Ֆրանսուհի Պասկալինա Շովեն: Գրանդարդ նույն մրցաձեւում հանդես եկան հարեւան Բավարիայի ամենաուժեղը՝ ռուսաստանցի Միխայիլ Գրուզինցեւը: Երկրորդ արդյունքը գրաց ավելց նորվեգացի Ստեյն Ռոբերը, իսկ երրորդ հորիզոնականին գրաղեցրեց իտալացի Մաուրո Մաստրոտտան:

ԱԶԳ

ՕՐՎԱ ԽԵՏՔԵՐՈՎ

ԹԵԼԴՅԱԼ ՏՈՒԵՐ

Լևոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Մանուկյանը նվերներ կփոխանակեն

Մեր տարածաշրջանում միշտ էլ դաժան բարքեր են տիրել. մարդկանցից փիկ են սարքել, կուրացրել, գլխատել: Միջնադարյան Պարսկաստանում շահերի ոչ բազմաթանգ աղա զավակներին են նույնիսկ տղամեկ որդեցի նրանք հեռացայում չմրցակցեն իրենց ավագ եղբոր հետ եւ բազալորությունը չկիսեն: Մենք էլ այդելով այս տարածաշրջանում ընտելացել ենք դաժանությանը: Թուլացել է մեր մեջ իսլամական մեր հաստությունը: դարձել ենք անհանդուրժող: Մեր հիստերությունն է նույնիսկ դաժանություն բոլորատում կենդանիների գոհաբերությունը: Որոշ մարդիկ երեխաներին մանկուց հավ, նույնիսկ ոչխար մորթել են սովորեցնում: Բարեբախտաբար, մեր ժողովուրդը միշտ էլ հայացքն ուղղել է խաղաղակիր ազգերին: Նրանցից օրինակ վերցրել: Այժմ միայն մնացել է երեքն դատահող ծեծն ու ջարդը, որը սակայն, սակայն արդի արդի թաղամասերում: Մանավանդ Նահանգներից մի շատ գեղեցիկ լուր ստացվեց: Ուրբաթ երեկո մոտայում Սուրբ Ծննդի ոգին է սկսել տիրել Սոֆիակ տանը, երբ խաղաղական երկու ոխերիս հակառակորդներ Բոբ Դոուլն ու Բիլ Քլինթոնը մեկ ժամից ավել այնտեղ զրուցել ու անցյալն են վերհիշել: Հանրապետական կուսակցության դարտությունն կրած նախագահական թեկնածու Ռոբերտ Դոուլը, մոռանալով ոխը, այդ օրը այցելեց նախագահ Քլինթոնին Սոֆիակ տանը, որը զարդարված էր Ծննդյան տոնին համապատասխան: Սոֆիակ տան ներկայացուցիչը հայտնեց, որ Բոբ Դոուլն ու Բիլ Քլինթոնը նվերներ են փոխանակել ու տվել նոյեմբերին տեղի ունեցած նախագահական ընտրությունների հետ կապված հուշերին: Դոուլն ու Քլինթոնը նշել են, որ երկուսի համար էլ այս տարի հաստատես հեստերիր է անցել:

Կարծում եմ, որ Հայաստանում էլ այս տարի խաղաղական կյանքը դարձյալ հեստերիր չանցավ. վկա սեպտեմբերյան նախագահական ընտրությունները: Թվում է, թե մեր նախագահական թեկնածուներն էլ եւ հատկապես «Ղարաբաղ» կոմիտեում զինակից դարձած Վազգեն Մանուկյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը վերհիշելու շատ բան ունեն: Ի՞նչ լավ կլինի, եթե նախագահական նստավայրը զարդարվի Ծննդյան տոնին վայել, եւ մեր ընդդիմադիրները, կամ գոնե այսօրվա օրվ նրանցից գլխավորը Վազգեն Մանուկյանը, այցելի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, եթե նրանք նվերներ փոխանակեն ու տվեն խաղաղ հուշերին: Վատ չէր լինի նաեւ, որ ընդդիմադիրներն այցելեին նույնպես Ծննդյան տոնին վայել զարդարված Ազգային ժողովի շենքը եւ ոչ թե հարվածներ, այլ նվերներ փոխանակեին խորհրդարանի դարձվորների ու ղեկավարության հետ: Այն ժամանակ հարկ չէր լինի սպասել մինչեւ 2001 թվականը: Որոշ աստվածներ այժմ էլ կհասկանար, որ Հայաստանը հիստերիր խաղաղակիր երկիր է:

Այս ամենը դեռ կարող է իրագործվել: Չէ՞ որ մինչեւ Սուրբ Ծննդյան տոնը դեռ ժամանակ կա:

ԳԵՐՄԱՆ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

Նախագահ Քլինթոնը զրուցում է Վաշինգտոնի «Յուիրդն սթիրդ» խանութի վաճառող Աուրես Սինգհի հետ: Նախագահն այդ խանութից գնեց Ս. Ծննդյան ժամանակ տոնի առթիվ նվերներ իր ընտանիքի անդամների, զուգընկերների եւ իր երեխաների համար: Հանձնելն դեռ. Սոֆիակ տան պատասխանատուները ժամուցից պահանջեցին չբացահայտել նվերների բովանդակությունը

«Հ. Բ. Ը. Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ»

ԼՈՒՅՍ ԵՎ ՍԵՎԱԿ

հեղինակ Կարեն Դալլաքյան

հրատարակություն «Ազգ» օրաթերթի

Երեւան, 1996 թ., 112 էջ

Տպագրված է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ:

ALLIANCE Co. Ltd.

ԱԼԻԱՆՍ ՍՊԸ

«Ալիանս» ՍՊԸ-ը արդյունաբերական ձեռնարկություններին, կազմակերպություններին, հիմնարկներին եւ ֆիզիկական անձանց առաջարկում է իր ծառայությունը, տուկայականի համեմատությամբ մատչելի գներով վաճառել ներմուծիչալ ադրանքատեսակները.

№	Անվանումը	Չափի միավորը	Վաճառքի գինը (դրամ)
1.	Պոլիէթիր LUP հա. 1040 իր կոմպոնենտներով (համապատասխանում է ռուսական ստանդարտին)	15 կգ բալոն	18252
2.	Ալիդային խեժ	1 կգ	–
3.	Պարկետի լաք (լուծիչով)	գալոն	5050
4.	Դեբուրիլֆտալաս (ԲՍՍՖ-գերմանական ֆիրմա)	210 կգ (մեծաղյա տարա)	950
5.	Պերխլորէթիլեն	1 կգ	750
6.	Ցյուք № 4	1 կգ	85
7.	Ացետոն 99,98 տոկոս	(155 կգ) 1 կգ	750
8.	Պատի ջրաներկ «Կավե»	գալոն	1800
9.	Սինթետիկ ներկ. սոֆիտակ	20 կգ	20000
10.	Սինթետիկ ներկ. սոֆիտակ	գալոն	5050
11.	Սինթետիկ ներկ. սոֆիտակ	կվարտա	1435
12.	Նիտրո ներկ (սեւ. սոֆիտակ)	կվարտա	1600
13.	Անտիֆրիզ	գալոն	2175
14.	Նիտրո ներկ, կանաչ, կարմիր, կապույտ, դեղին	կվարտա	1750
15.	Պատուհան պլաստմասսայից	1 հատ	66100
16.	Օֆսեթ (Կանադա) 84 սմ լայն. 68 գր/մմ	1 տ	1290 ԱՄՆ դոլար
17.	Ֆաներա	1,20–2,40 հաստութ. 18մմ	11750
18.	Ֆախի թուղթ		1140

Հասցե՝ Տպագրիչների 9, բն. 36

Հեռ՝ 52.16.00, 58.98.49, 52.93.90 Ֆաքս՝ 56-51-02, AT&T 151-718

«Լիմուզիններ», «Ֆորդ» միկրոավտոբուս եւ այլ մեքենաներ ցանկացած պահին,
ցանկացած առիթով
Կազմակերպական հոգսեր՝
հյուրերի ընդունման, հարսանեկան ծիսակատարության,
ծնունդի, կնունքի, հուղարկավորության ժամանակ, նաեւ տեսանկարահանում, նվագախումբ
Թե՞ ուրախության և թե տխրության պահին
«Լիմուզին սերվիսը»
միշտ ձեր հետ է
Մեր հասցեն՝ Բաղրամյան 1
Հեռ. 58 96 38



ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան, ավտոտնակով, Վրացական փողոցում:
ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝
25-11-87, 58-18-41

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե տնի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 տնում:
Հեռախոսներ՝
58-18-41, 52-30-56

Վաճառվում է
երկու սենյականոց բնակարան Նորքի V զանգվածում:
Հեռ. 64-36-60

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ընդունվում են ֆեների եւ միկսերների կապիտալ վերանորոգման պատվերներ:
ՀԵՌ՝ 22-15-74

ԱԲԱՔ
«ԱՅԱՔՍ»
ՖԻՐՄԱՆ ՁԵՋ ՀԱՄԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ Է
ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱԿԱՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԻՊՐՈՍ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՑ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ը ԵՎ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՑ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ը
**** հյուրանոցներ բոլոր հարմարություններով
Հրաշալի Միջերկրական ծովափ
հանելի ժամանց բոլոր տարիքների համար
ԱՄԵՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ «ԱՅԱՔՍ»-Ը ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
ՀԱԼԵՊ-ԲԵՅՐՈՒԹ
7-օրյա հանգստի, որտեղ դուք կաղահովվեք բարձրակարգ հյուրանոցներով, սենյոկով՝ 2 անգամ
Ֆիրման ձեզ ցանկանում է հաճելի ժամանց եւ շահավետ գնումներ
ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43/ա ՀԵՌ. 538845, 531573

Avant Garde Boutique
ԲՈՒՏԻԿ
Խանութն առաջարկում է
կանանցի և տղամարդու հագուստի և
աքսեսուարների հարուստ տեսականի
ԱՍԱՆՈՐՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ
Ցնդրդ գներով 5-15%
GIORGIO ARMANI Իտալիա
LAURENT CHARLES Ֆրանսիա
STEFANO Ֆրանսիա
DIESEL Իտալիա
LONGINES Շվեյցարիա
DUPONT Ֆրանսիա
ԱՄԵՆԱՑԱԾՐ ԳՆԵՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ
Սպասում ենք Ձեզ: Անմեն օր ժամը 10-ից 19 հետեւյալ հասցեով.
Մ. Բաղրամյան պող. 58, հեռ. 27-29-03

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – ՍԼՎՑՍՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՍԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ՝ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Աբովյանյան 2, Գրանցման թիվ 85, Պատվեր 69149, Պատճեն 2252, Տպաքանակը՝ 4000, Ստորագրված է տպագրության՝ 23.12.1996, Գինը՝ 75 դրամ